




ANNUAL REPORT
ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՈՒՐԲ ԵՐՈՈՒԴՈՒԹԻՒՆ
 ՂԵՅԱՏԵՆԵՆՅՅ ԿԻՆԲԵՒԿԱՆ ԵԿԵՂԵՉԻ
 ԱՆՏԿՈՒՅՆ ՊԱՌՈՒՄ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH
of GREATER BOSTON
 145 BRATTLE STREET
 CAMBRIDGE, MASSACHUSETTS

ANNUAL PARISH ASSEMBLY, FEBRUARY 11, 1979



LET US PRAY

P R A Y E R

O JESUS, WISDOM OF THE FATHER,
GRANT US WISDOM, THAT WE MAY ALWAYS
THINK, SPEAK, AND DO THAT WHICH IS
GOOD IN THY SIGHT; SAVE US FROM
EVIL THOUGHTS, WORDS AND DEEDS.
HAVE MERCY UPON US.

AMEN

+++++

Ա Ղ Օ Թ Ք

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՀՕՐ ՅԻՍՈՒՍ, ՏՈՒՐ ՄԵՁ
ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՋԲԱՐԻՍ ԽՈՐՀԵԼ ԵՒ ԽՕ-
ՍԵԼ ԵՒ ԳՈՐԾԵԼ ԱՌԱՋ ԻՈ ՅԱՄԵՆԱՅՆ
ԺԱՄ Ի ՉԱՐ ԽՈՐՀՐԴՈՑ, Ի ԲԱՆԻՑ ԵՒ
Ի ԳՈՐԾՈՑ ՓՐԿԵԱ ՄԵՁ. ԵՒ ՈՂՈՐՄԵԱ
ԻՈ ԱՐԱՐԱԾՈՑ ԵՒ ՄԵՁ ԲԱԶՄԱՄԵՂԱՑԱ:

ԱՄԷՆ:

Ս.ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍՏՈՆԻ

ՕՐԱԿԱՐԳ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Կիրակի, Փետրուար 11, 1979, Կ. Վ. Ժամը 12.30-ին

Ա. նիստ

1. Բացման Աղօթք:
2. Ընտրութիւն օրուան ղիւանի:
3. Ընտրութիւն ծխական Խորհուրդի ղաղարեալ անդամներու.- 6 անձ:
4. Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի.- 3 անձ:
5. Ընտրութիւն 1980-ի Ընտրական Յանձնախումբի.- 5 անձ:

ԴԱԴՄՐ ԵՒ ՃԱՇ

Բ. նիստ

6. Ընթերցում 1978-ի ծխական ժողովի ատենազրուութեան:
7. Հովիւի Տարեկան Ձեկոյցը:
8. Տեղեկագիր ծխական Խորհուրդի նիւթական եւ բարոյական հաշուետուութեան:
9. Վաւերացում 1979-ի պիւտճէին:
10. Տեղեկագիր Եկեղեցւոյս Օժանդակ Մարմիններու:
11. Նոր հարցեր:
12. Թեմական Պատգամաւորական ժողովին տարուելիք հարցեր:
13. Փակման Աղօթք:

* * * * *

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON
SUNDAY, FEBRUARY 11, 1979

AGENDA OF ASSEMBLY

FIRST SESSION:

1. Opening Prayer
2. Election of the Day's Chairman and Secretary
3. Voting for Parish Council members (6)
4. Voting for Auditing Committee (3)
5. Voting for Nominating Committee (5)

RECESS AND LUNCH

SECOND SESSION:

6. Reading of the Minutes of the 1978 Parish Assembly
7. Pastor's Report
8. Parish Council's Activities & Financial Report
9. Approval of 1979 Budget
10. Reports of Church Auxiliary organizations
11. New Business
12. Proposals for the Diocesan Assembly
13. Benediction

Reverend Father Mampre A. Kouzouian
Pastor and Parish Council President

Anita Hedison
Secretary, Parish Council

Helene Dorian
Chairman, Parish Council

ANNUAL REPORTS

| <u>TABLE OF CONTENTS</u> | <u>PAGE</u> |
|---|-------------|
| PASTOR'S REPORT - ARMENIAN | 1 |
| PASTOR'S REPORT - ENGLISH | 6 |
| PARISH COUNCIL REPORT - ARMENIAN | 10 |
| PARISH COUNCIL REPORT - ENGLISH | 17 |
| 76TH ANNUAL DIOCESAN ASSEMBLY REPORT | 21 |
| CHURCH INCOME (REGULAR ACCOUNT) | 23 |
| INCOME EXHIBITS | 24 |
| CHURCH DISBURSEMENTS (REGULAR ACCOUNT) | 25 |
| DISBURSEMENT EXHIBITS | 26 |
| SPECIAL ACCOUNT | 28 |
| MISCELLANEOUS FUNDS | 29 |
| PROPOSED BUDGET for 1979 | 30 |
| PROGRAM COMMITTEE MID-YEAR REPORT | 31 |
| SENIOR WOMEN'S GUILD ANNUAL REPORT | A1 |
| SENIOR WOMEN'S GUILD FINANCIAL REPORT | A2 |
| WOMEN'S GUILD ANNUAL REPORT | A3 |
| WOMEN'S GUILD FINANCIAL REPORT | A4 |
| TRINITY MEN'S UNION ANNUAL REPORT | A5 |
| TRINITY MEN'S UNION FINANCIAL REPORT | A6 |
| CHELSEA WOMEN'S AUXILIARY ANNUAL & FINANCIAL REPORT | A7 |
| LYNN, SALEM, PEABODY WOMEN'S AUX. ANNUAL & FINANCIAL REPORT | A8 |
| ARMENIAN SCHOOL ANNUAL & FINANCIAL REPORT | A9 |
| SUNDAY CHURCH SCHOOL ANNUAL REPORT | A10 |
| SUNDAY CHURCH SCHOOL FINANCIAL REPORT | A11 |
| CHOIR ANNUAL & FINANCIAL REPORT | A12 |
| A.C.Y.O.A. SENIORS ANNUAL REPORT | A13 |
| A.C.Y.O.A. SENIORS FINANCIAL REPORT | A14 |
| A.C.Y.O.A. JUNIORS ANNUAL & FINANCIAL REPORT | A15 |
| EREVAN CHORAL SOCIETY ANNUAL REPORT | A16 |
| EREVAN CHORAL SOCIETY FINANCIAL REPORT | A17 |
| TRINITY YOUNG COUPLES CLUB ANNUAL REPORT | A18 |
| TRINITY YOUNG COUPLES FINANCIAL REPORT | A19 |
| FRIENDS OF HOLY TRINITY - 1000 CLUB ANNUAL & FINANCIAL REPORT | A20 |

* * * * *

REPORT OF AUDITING COMMITTEE
OF HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

On January 23, 1979 the Auditing Committee examined the financial statements of the various organizations of the Holy Trinity Armenian Church of Greater Boston for the calendar year 1978 as follows:

| | | |
|-------------------------------------|---------------------------|----------------------------------|
| Parish Council | Sunday Church School | Trinity Young Couples Club |
| Armenian School | Senior Women's Guild | Women's Guild |
| Trinity Men's Union | Choir | A.C.Y.O.A. Seniors |
| Erevan Choral Society | Chelsea Women's Auxiliary | Lynn, Salem, Peabody Women's Aux |
| Friends of Holy Trinity - 1000 Club | | A.C.Y.O.A. Juniors |

In the opinion of the Committee the financial statements represent accurately a statement of income and disbursements and changes in financial position from January 1, 1978 to December 31, 1978.

Auditing Committee
Gertrude Nahigian
Armine Der Hagopian
Diran Zahigian

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ

Տ. ՄԱՄԱՐԷ ԲՀՆՅ. ԳՈՒԶՈՒԵԱՆԻ

---o---

Սիրելի ծխականներ,

Աստուծոյ ողորմութեամբ եւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյս հաւատացեալ եւ նուիրեալ ծխականներու օգնութեամբ, արդիւնաւոր տարի մը եւս բոլորեցինք: Առանց ձեր քաջալերանքին եւ գործակցութեան, կարելի չէր իրագործել այն ինչ որ ըրինք:

Այս տարի բոլորած կ'ըլլանք հովուական մեր գործունէութեան երկրորդ տարին այս համայնքին մէջ:

Ստորեւ կը գտնէք մեր հովուական գործունէութեան միամեայ զեկոյցը հետեւեալ բաժանումներով. -

1.- ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.-

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ կարգաց-կանոնաց համաձայն, ամէն կիրակի, բացի կիրակի, Փետրուար 12-էն, ծանօթ ձիւնամրրիկի պատճառաւ, անխափան Ս. Պատարագ մատուցուած է եկեղեցւոյս մէջ եւ քարոզած ենք թէ հայերէն եւ թէ անգլերէն լեզուներով: Կարգ մը առիթներով պատարագած կամ քարոզած է եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ Արժ. Տ. Բարզէն Ա. Բհնյ. Մագսուտեանը:

Ս. ծննդեան եւ Ս. Զատիկի ճրագալոյցներուն ծուխիս ղարոցական մանուկներուն համար արարողութիւն կատարած եւ Ս. Հաղորդութիւն մատակարարած ենք:

Փետրուարին, Վարդանանց տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուցուած է եկեղեցւոյս մէջ, մասնակցութեամբ նիւ ինկլէնտի հայ հոգեւորականներու: Նոյն իրիկուն Վարդանանցի յայտագիր մը գործադրուած է եկեղեցւոյս մէջ: Ապրիլ 23-ին, նահատակաց օրուան նախօրեակին, Ուոթըրթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ գործակցութեամբ, երիտասարդաց լուռ թափօր մը կազմած ենք Գէյմպրիճի մէջ, եւ ապա Հոգեհանգստեան Պաշտօն կատարած ենք եկեղեցւոյս մէջ, Ապրիլեան նահատակներու յիշատակին: Եկեղեցական արարողութեան աւարտին երիտասարդաց յատուկ յայտագիր մը գործադրած ենք Մշակութային մեր կեդրոնին մէջ: Ապրիլ 24-ին, երկու եկեղեցիներուս գործակցութեամբ Ս-Պատարագ մատուցած ենք Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ: Յունիս 25-ին, Սէյլըմ-Բիպատիի մէջ, Ս. Պատարագ մատուցած ենք այդ շրջանի հայութեան համար: Կիրակի, Յունիս 30-ին, Գաթհիտըրը Աւ Թհր Բայնգ`ի մէջ, Ս. Պատարագ մատուցուած է նիւ ինկլէնտի Հայաստանեայց եկեղեցիներու համագործակցութեամբ: Պօղոս Զ. Պապի մահուան առթիւ, Հոգեհանգստեան մասնաւոր Պաշտօն կատարած ենք եկեղեցւոյս մէջ, Կիրակի, Օգոստոս 20-ին: Այս առթիւ խօսեցանք հանգուցեալ Պապի կեանքին եւ գործունէութեան շուրջ: Ծանօթ երգեհոնահար Պերճ Ժամկոչեան յիշատակի մենահամերգ մը տուաւ այս առթիւ:

Ամերիկեան Գոհաբանութեան Օրուան առթիւ, նոյեմբեր 19-ին, ընտանեկան պաշտամունք կատարեցինք եկեղեցւոյս մէջ. ներկայ հաւատացեալները իրենք երգեցին Ս. Պատարագէն Դպրաց Դասի բաժինը: Նոյն

ձեռով Պատարագ մատուցինք նաեւ Կիրակի, Դեկտեմբեր 24-ին, Ամերիկեան Զրիսմըսի նախօրեակին: Պատարագի աւարտին ներկայ հաւատացեալները միասնաբար երգեցին Ամերիկեան Զրիսմըսի յատուկ երգեր:

Մեծ Պահոց շրջանին ամէն Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրեր, Ուոթըթաու-նի Ս. Յակոբ Եկեղեցւոյ հետ միասնաբար Արեւազալի եւ Հսկումի ժամերգու-թիւն կատարած ենք փոխն ի փոխ երկու եկեղեցիներու մէջ:

Աւագ Հինգշաբթի առաւօտեան Ս. Պատարագ մատուցինք: Երէց Տիկնանց Միուլթեան անդամուհիները խմբական Ս. Հաղորդութիւն ստացան. ապա իւնեցան իրենց ճաշկերոյթ-ժողովը:

Աւագ Հինգշաբթիի Ոտնլուայի արարողութեան ընթացքին, Մեծագոյն Պոստոնէն 12 հայ ոստիկաններու ոտքերը լուացինք, ի յարգանք իրենց մատուցած հանրային ծառայութեան: Աւագ Շաբթուան մնացեալ օրերուն, Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգաց-կանոնաց համաձայն ժամերգութիւն կատարեցինք: Մարտ 15-ին, Եկեղեցւոյ Տիկնանց Միուլթեան անդամուհիներուն հետ, Չէլմսֆըրտի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ մասնակցեցանք Հայց. Եկեղեցւոյ Սրբուհիներու տօնակատարութեան:

Որպէս զի Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագը աւելի մատչելի եւ հասկնալի դարձնենք ամերիկածին անգլիախօս մեր սերունդին, Մայիս 21-ին եւ Հոկտեմբեր 29-ին, բացատրական պատարագ մատուցինք, ուր պատարագի ընթացքին, ընդմիջելով, անգլերէնով բացատրութիւն տրուեցաւ պատարագի մասին: Բաց աստի, թէ Մեծ Պահոց շրջանին եւ թէ զանազան առիթներով, բաջալերեցինք մեր ժողովուրդը, մասնակցելու Ս. Պատարագի Դպրաց Դասի երգեցողութեան:

Ամառնային շրջանին, Կիրակնօրեայ եւ Հայ Վարժարաններէն 10 փոքրիկ տղաք մարգեցինք իբրեւ Ս. Սեղանի սպասարկու: Շաբաթը անգամ մը ճաշու Աւետարանի ընթերցման փորձեր ըրինք մեր կիսասարկաւազներէն մէկուն հետ: Ամառը խումբ մը փոքրիկներու հետ սկսանք կրտսերաց Դպրաց Դասի փորձերու: Ջանազան առիթներով ներկայ եղանք նաեւ Դպրաց Դասի փորձերուն:

Այս առթիւ կը գնահատենք Ս. Սեղանի սպասարկուներուն եւ Դպրաց Դասի անդամներուն նուիրեալ ծառայութիւնը:

2.- ՀԻՒՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ.-

Նոյեմբեր 28-ին, իր շնորհաբեր այցելութեամբ, Եկեղեցիս ժամանեց Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեան: Երեկոյեան, Պատրիարք Սրբազանը հաճեցաւ ընթրիքի իրեն սեղանակից ընել շրջանիս հոգեւորականները, Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի անդամները եւ մեր թեմական պատգամաւորները: Ընթրիքէն ետք ``Հրաշափառ``ի արարողութիւն եւ դասախօսութիւն տեղի ունեցաւ Եկեղեցւոյս եւ Մշակութային կեդրոնին մէջ:

Դեկտեմբեր 9-ին, մեր Եկեղեցին այցելեց ֆրանսայէն, Փարիզի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Գիւտ Եպիսկոպոս նազաշեան:

Տարւոյս ընթացքին հետեւեալ խորհուրդներն ու ծիսակատարութիւնները կատարուած են Եկեղեցւոյս մէջ.-

| | |
|--------------------|----|
| Ա.- Մկրտութիւնք | 25 |
| Բ.- Պսակ | 11 |
| Գ.- Թաղում | 40 |
| Դ.- Նշանօրհնութիւն | 1 |

Հարսանիքներու պարագային, պսակի արարողութեան փորձեր ունեցած ենք ամուսնանալիք զոյգերու հետ, որպէս զի Ս. Պսակի խորհուրդը կատարուի վայելուչ եւ հանդիսաւոր կերպով:

4.- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Եկեղեցւոյ առաքելութեան մէկ մասը պէտք է համարել հովուական այցելութիւնները: Հոգեւորականը՝ կերպով մը՝ խորհրդանշանն է Քրիստոսի գինուորեալ Եկեղեցիին. իր այցելութեամբ՝ Եկեղեցին է որ այցի ելած կ'ըլլայ իր հօտին: Այսպիսի այցելութիւններ ունին անշուշտ իրենց բարերար արդիւնքն ու ազդեցութիւնը: Այս համոզումով 317 հովուական այցելութիւններ տուինք մեր ծխականներուն, այս տարուան ընթացքին: Ասոնց մէջ կ'իյնան տուներ, հիւանդանոցներ, աշխատատեղիներ, հանգստեան տուներ մեռելատուներ եւ գերեզմանոցներ:

Ծնունդին եւ Զատկին տնօրհնէք ըրած ենք նաեւ այն ծխականներուն համար՝ որոնք առ այդ փափաք յայտնած են:

5.- ԽՈՐՀՐԴԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԿՍՈՒՆՍԸԼԻՆԿ՝.-

Եկեղեցականը, որպէս հոգեւոր հայրը իր հօտին, եւ խոստովանահայրը իր ժողովուրդին, իր գիտութեամբ եւ փորձառութեամբ կրնայ օգտակար ըլլալ եւ շիտակ առաջնորդել իր հօտը, երբ անոնցմէ ոմանք անձնական եւ կամ ընտանեկան դժուարութիւններու մէջ գտնուին եւ դիմեն իր օգնութեան: Այս համոզումով 29 տարբեր առիթներով ամուսնական խորհրդատուութիւններ ունեցած ենք ամուսնանալիք զոյգերու հետ, որպէս զի անոնց ամուսնութիւնը հիմնուի քրիստոնէական եւ ընկերային հաստատ եւ իրապաշտ հիմերու վրայ: Խորհրդատուութեան 19 պահեր ունեցած ենք նաեւ ընտանեկան դժուարութիւններ ունեցողներու հետ: Խորհրդատուութեան երկու պահեր ունեցած ենք նաեւ մկրտութեանց պարագային եւ վեց հատ ալ անձնական եւ կամ այլ խորհրդակցութիւններ եւ խորհրդատուութիւններ:

6.- ԺՈՂՈՎՆԵՐ.-

Ծխական մարմիններու ժողովները առիթներ են խորհրդակցելու եւ ուղղութիւն տալու եկեղեցական մեր կեանքին ու գործունէութեան: Տարւոյս ընթացքին, նախագահած եւ ուղղութիւն տուած ենք 13 եկեղեցապատկան կազմակերպութիւններու, դիւաններու, վարչութեանց, մասնաւոր մարմիններու, ձեռնարկներու եւ յանձնախումբերու 211 ժողովներուն: Ասոնցմէ զատ մասնակցած ենք նաեւ Թեմական խորհուրդի, Հոգեւորականաց տարեկան եւ ամսական շրջանային ժողովներուն, ինչպէս նաեւ տարեկան Պատգամաւորական ժո-

ղովին: Բազմաթիւ ժողովներ ունեցած ենք նաեւ անհատներու հետ: Այս տարի միացեալ ժողով սկսանք զուարել նաեւ եկեղեցապատկան կազմակերպութեանց հետ:

Սեպտեմբեր 26-ին, մեր ծխականներէն 30 անձեր հրաւիրած էինք խորհրդակցելու, եկեղեցւոյս նիւթական վիճակը ապահով հիմերու վրայ դնելու համար: Ուրախ ենք որ մեր ժողովները տուին իրենց բարերար արդիւնքը:

7.- ԿՐԹԱԿԱՆ.-

Ա.- Զանազան առիթներով այցելած եմ եկեղեցւոյս կիրակնօրեայ եւ Հայ Վարժարանները: Կիրակնօրեայ Վարժարան այցելութեանց առթիւ խօսած եմ աշակերտներուն, ներկայ եղած եմ դասաւանդութեանց եւ պատասխանած սաներու հարցումներուն: Հայ Վարժարանի դասաւանդութեանց եւս ներկայ եղած եմ եւ զանազան առիթներով խմբերգներ սորվեցուցած մեր փոքրիկներուն: Ուրախ ենք որ այս տարի Հայ Վարժարանի տնօրէնն է Հարվրտ Համալսարանի արեւելագիտութեան դասախօսներէն Տօթթ. Գէորգ Պարտազմեան:

Պէտք է աւելի եւս քաջալերել մեր զոյգ վարժարանները եւ բազմապատկել աշակերտութեան թիւը:

Բ.- Դասախօսութեանց եւ մշակութային յանձնախումբը կը շարունակէ իր աշխատանքը: Այս տարի շարունակեցինք ՝ ծանօթացնելու Հայաստանեայց եկեղեցին ՝ դասախօսութեանց շարքը: Մեր հիւր դասախօսներն էին ՝ Հոգ2. Տ. Զաւէն Ժ. Վրդ. Արզումանեան, Տ. Տաճատ Բինյ. Դաւիթեան, Տոթթ. Գրիգոր Մագուտեան եւ ես:

Եկեղեցապատկան եւ այլ կազմակերպութեանց ժողովներուն խօսած ենք զանազան նիւթերու շուրջ: Եկեղեցւոյս ամսաթերթին ՝ ՝ Տաճար ՝ ՝ ի միջոցաւ եւս կատարած ենք ուսուցողական աշխատանք:

Մշակութային ամսուան առթիւ, Հոկտեմբեր 6, 7, 8-ին, նիւ Եորքաբնակ հայ արուեստագէտներու նկարները ցուցադրեցինք Մշակութային մեր կեդրոնին մէջ: Հոկտեմբեր 13, 14, 15-ին, հնահաւք Յարութիւն Հազարեանի հայկական ծեռագիրներու եւ հայկական հնութիւնները ցուցադրեցինք դարձեալ Մշակութային մեր կեդրոնին մէջ:

Գ.- Եկեղեցւոյս ծխականներէն ՝ Պաղտասար եւ Պայծառ Պօզիկեաններու զաւակներուն եւ թոռներուն նուիրատուութեամբ, Կիրակի, Յունիս 4-ին, Մէթրոքոլիթըն Օփերայի աստղերէն ՝ Լիլի Չուգազեան համերգ մը տուաւ եկեղեցւոյս մէջ: Պոսթոնի մեծագոյն թերթերէն ՝ Պոսթոն Կլօպ ՝ ՝ մեծ գնահատանքով անդրադարձաւ այս համերգին մասին:

Կը գնահատենք Պօզիկեան ընտանիքի այս գեղեցիկ նուէրը եւ կը յուսանք որ ուրիշներ եւս պիտի հետեւին իրենց բարի օրինակին:

Դեկտեմբեր 17-ին, Եկեղեցւոյս ՝ Բրօ-Միւզիկա ՝ ՝ յանձնախումբի նախաձեռնութեամբ, ծննդեան համերգ մը տեղի ունեցաւ Եկեղեցւոյս մէջ, Եկեղեցւոյս ՝ Երեւան Երգչախումբ ՝ ՝ ի կատարմամբ եւ Հոգ2. Տ. Օշական Վրդ. Մինասեանի ղեկավարութեամբ: Կը գնահատենք Հայր Օշականի նուիրումը եւ աշխատանքը:

8.- ՀԱՆՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ.- ԿՐԱՊԼԻՔ ՌԻԼԷՅՇՇՆՁ՝

Եկեղեցւոյս ծխականներէն՝ Տիկ. Պարպըրա Թէլլաւեան, կամաւորաբար եւ նուիրումով փարած է սոյն գործին: Ան, մեր առաջնորդութեամբ, Եկեղեցւոյս ձեռնարկներուն մասին, կանոնաւոր լրատուութիւն կը դրկէ հայ Թէ օտար թերթերուն, ձայնասփիւռի եւ հեռուստատեսի կայաններուն եւ զանազան հաստատութեանց:

Անցեալ Հոկտեմբերին, Մշակութային ամսուան առթիւ, հեռուստատեսի ալիք 5-ի վրայ ութը կարճ յայտագիրներ ունեցանք: Նիւ հնկլէնտէն ծանօթ անձնաւորութիւններ՝ խօսեցան հոգեւոր եւ մշակութային նիւթերու շուրջ:

Դեկտեմբեր 20-ին եւ 25-ին, 9 ալլ ազգութիւններու հետ, կրօնական յայտագիր մը գործադրեցինք Ալիք 4-ի վրայ: Ներկայացուցինք մասեր Ս. Պատարագէն եւ Զրօրհնէքի արարողութիւններէն:

Յունուար 7, 1979-ին, կէս ժամ տեւող յայտագիր մը Ալիք 5-ի վրայ: Կատարեցինք Զրօրհնեաց արարողութիւնը եւ հարցազրոյց մը ունեցան մեզի հետ:

Սոյն յայտագիրներուն մասնակից ըրած էինք նիւ հնկլէնտի հայ հոգեւորականները: Այս առթիւ կը զնահատենք Պարպըրա Թէլլաւեանի ծառայութիւնը եւ պատրաստակամութիւնը:

9.- ԳՐԱՍԵՆՆԱԿԱՅԻՆ ԺԱՄ.-

Պահած ենք կանոնաւոր գրասենեակային ժամեր: Առաւօտեան ժամը 9.30-էն կ.վ. 4.00-ը: Ըստ նախորդ տարիներու՝ ընթացք տրուած են կանոնաւոր թղթակցութեանց եւ պահուած են արձանագրութեանց տոմարներ: Հոգեւոր Հովիւէն գատ, Եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ՝ Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագստեան եւ քարտուղարուհի Տիկ. Ռոզ Մէմիշեան կ'աշխատին գրասենեակային աշխատանք կատարելու: Տիրացու Պետրոս Առաքելեան եւս կ'օգնէ մեզի կամաւորապէս: Մեր ծխականներուն մէջ եւս կան կամաւորներ, որոնք սիրայօժար կ'օժանդակեն մեզի երբ պէտք զգանք իրենց օգնութեան: Անցեալ ամառ, Ակնէս Նահիկեան՝ երկու շաբաթ կամաւորապէս եկաւ օգնելու մեր գրասենեակին: Երբ քարտուղարուհին արձակուրդով կը բացակայէր: Շնորհակալութիւն իրեն եւ բոլոր կամաւորներուն:

Այս առթիւ Տ. Բաբգէն Հօր եւ իմ իմ կողմէս մեր զնահատանքը կը յայտնենք քարտուղարուհի Տիկ. Ռոզ Մէմիշեանին՝ իր նուիրեալ ծառայութեան համար:

10.- ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Տարւոյս ընթացքին կարգ մը կարեւոր նուիրատուութիւններ եղան Եկեղեցւոյս, որոնցմէ ոմանք կ'ուզենք յիշել հոս.-

Ա.- Երախտագիտութեամբ կ'ուզենք յիշել Տէր եւ Տիկ. Այգ Քարչաբեաններու նուէրը: Եկեղեցւոյս պրոնգէ նոր դռները իրենց իշխանական նուիրատուութեամբ շինուեցան ի յիշատակ իրենց վաղամեծիկ զաւկին՝ Տէյվիտ Ալանի:

Բ.- Տէր եւ Տիկ. Նշան Սիմոնեաններ՝ ի յիշատակ իւր ծնողաց եւ քրոջ, Ս. Յարութեան մեծաղիր իւղաներկ նկար մը նուիրեցին Եկեղեցւոյս:

Սոյն նկարին ռժուժը պիտի կատարուի երբ Առաջնորդ Սրբազանը այցելէ մեր եկեղեցին:

Գ.- Եղան նաեւ նիւթական նուիրատուութիւններ, որոնց անուանացանկը կարելի է գտնել ծխական խորհուրդի նիւթական հաշուետուութեանց մէջ:

Կը գնահատենք բոլոր նուիրատուութիւնները: Թող Աստուած վարձահատոյց ըլլայ բոլորին:

11.- ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Ա.- Ծնողներ պարտին մօտէն հետաքրքրուիլ Հայ եւ Կիրակնօրեայ վարժարանով: Ծնողաց անտարբերութիւնը կ'ազդէ նաեւ իրենց գաւակներուն վրայ: Պէտք է քաջալերէք ձեր գաւակները, որպէս զի կանոնաւորապէս յաճախեն մեր վարժարանները:

Բ.- Կրօնական դաստիարակութեան եւ երիտասարդաց վարիչ մը գտնելու գործը կարեւոր է: Անցեալ ամառ, երկու երիտասարդներու հետ հանդիպումներ ունեցանք այս նպատակաւ. կը ցաւինք որ մեր հետապնդումները ցարդ արդիւնք չտուին: Այս մասին խօսած ենք նաեւ Առաջնորդ Սրբազան Հօր հետ: Կը յուսանք որ այս պահանջը կարելի պիտի ըլլայ գոհացնել: Նիւթականը կարեւոր դեր ունի կատարելիք այս գործը յաջողցնելու համար:

Գ.- Ամառնային շրջանին, նիւթական անձուկ վիճակի մատուցաւ եկեղեցիս այս տարի: Կ'երեւի թէ ամէն ամառ կը կրկնուի այս երեւոյթը: Եկեղեցւոյս համար պէտք է ապահովենք մնայուն եկամուտի աղբիւրներ: Ծրխականներ իրենց կտակին մէջ պէտք է յիշեն նաեւ իրենց եկեղեցին:

Անդամատուրքերու յաւելման շուրջ ծխական խորհուրդը առաջարկ մը պիտի ներկայացնէ Տարեկան Անդամական Ժողովին: Կը թելադրենք որ ժողովը կարեւորութեամբ եւ բարի կամեցողութեամբ նկատի առնէ սոյն առաջարկը:

Դ.- 1980-ին պիտի տօնակատարենք Ապրիլեան Նահատակներու 65-ամեակը: Մեր իղձն է որ այս առթիւ Եկեղեցւոյս հողին վրայ Յուշարձան մը կանգնենք մեր Ազգին երկու միլիոն նահատակներու անմար յիշատակին:

Կը թելադրենք որ սոյն անդամական ժողովը երեք հոգինոց յանձնախումբ մը նշանակէ այս գործով զբաղելու եւ պատշաճը տնօրինելու առ այդ:

12.- ԳՆԱՀԱՏՄԱՆՔ.-

Ծխական անդամական այս ժողովին հրապարակաւ մեր անվերապահ գնահատանքն ու շնորհակալութիւնը կը յայտնենք Եկեղեցւոյս Պատուակալ Հովիւ՝ Արժ. Տ. Բաբգէն Ա. Բ'նյ. Մագսուտեանին՝ իր սիրալիր աջակցութեան եւ օժանդակութեան համար: Ենորհակալութիւն նաեւ Հոգ. Տ. Օշական Վրդ. Մինասեանին՝ իր աջակցութեան համար:

Կը գնահատենք նաեւ ծխական խորհուրդի անդամներուն նուիրուածութիւնը եւ ծառայութիւնը, ինչպէս նաեւ մեր կազմակերպութեանց դիւաններուն եւ անդամներուն եկեղեցաշէն աշխատանքը: Գնահատանքի արժանի են նաեւ Ս. Սեղանի սպասարկուներն ու Դպրաց Դասի անդամները:

Կ'աղօթենք որ Աստուած օրհնէ եւ զօրացնէ մեզ բոլորս, իր կամքին համաձայն բեղմնաւորելու համար իր այս անդաստանը:

Աղօթարար
ՄԱՄԱՐԷ ԲՀՆՅ. ԳՈՒԶՈՒԵԱՆ, Հովիւ

PASTOR'S ANNUAL REPORT

for 1978

REVEREND FATHER MAMPRE KOUZOUIAN

Dear Parishioners:

I give thanks to Almighty God that with His Divine Guidance together with our dedicated parishioners we were able to accomplish a successful year. This is my second Annual Report to our beloved parishioners of the Holy Trinity Armenian Church of Greater Boston. With your prayers, dedication and sacrifice, we were able to work in the vineyard of the Lord for our salvation and edification of His Church.

The following are some of the highlights of my pastoral activities for the year 1978.

I. Church Services

During the past year I conducted services in our church according to the Canons and traditions of our church and delivered the sermon in both languages. Divine Liturgy was also celebrated on high holidays that coincided during the week.

I feel that Sunday Badarak are very essential for us as Christians where we receive our spiritual nourishment. The attendance and participation of our faithful parishioners at the Badarak celebrations are very essential for the survival of our church and our faith. I appreciate the collaboration of our Pastor Emeritus, Father Papken Maksoudian, and our Choir Director, Father Oshagan Minassian who did their best to conduct and assist during the church services.

Christmas and Easter Services were conducted and Holy Communion was administered to the children, the youth of our parish. On St. Vartanantz Day, the Reverend Fathers of the Armenian Churches of New England participated in the Divine Liturgy in our Church. The same evening, we also had a Vartanantz Program and Reception for the Armenian community of Greater Boston. On February 12th, due to the 1978 blizzard, we were able to conduct morning services rather than the celebration of the Divine Liturgy.

During the Lenten season the Order of the Sunrise Services and "Peace and Rest" Services were conducted alternately in our church and at St. James Church of Watertown. On March 15th, together with the ladies of our community, we participated at a church service celebrating the "Women Saints of the Armenian Church Day" at St. Vartan's Church in Chelmsford. According to the Rites of the Armenian Church on Holy Thursday, we celebrated the Divine Liturgy and administered Holy Communion to the members of the Senior Women's Guild, followed by a luncheon. On Holy Thursday at the "Washing of the Feet Service", I invited twelve Armenian policemen from the Metropolitan Boston area and washed their feet as a gesture of appreciation for their dedication to their profession. During the remainder of Holy Week, I conducted services according to our tradition. On April 23d, the night before the Armenian Martyrs Day, a silent procession was held from the Cambridge Commons to our Church with the participation of our youth and many other Armenians from the metropolitan Boston area. A Requiem Service and a Program was conducted in our church in memory of our martyrs. On April 24th, I celebrated the Divine Liturgy at St. James Church in Watertown. On July 25th I celebrated the Divine Liturgy and preached in Salem for the Armenian community of Salem, Lynn and Peabody. In cooperation with the Armenian churches in New England, a joint celebration of the Divine Liturgy was conducted on

July 30 at the Cathedral of the Pines in New Hampshire. On August 20 a special Memorial Service and Program was held for the soul of the late Pope Paul VI. Berj Jamgochian, the renowned organist of the Boston Symphony and Pops Orchestra, was our guest performer. On November 19th, a Family Thanksgiving Service was conducted in our Church. The whole congregation took part in singing the Divine Liturgy. The members of the Women's Auxiliary received Holy Communion, followed with a Brunch. On December 24th, on the Eve of the American Christmas, we conducted a Family Service followed by Christmas carolling sung by the entire congregation.

To make our Divine Liturgy more meaningful and comprehensible to our parishioners we conducted "Instruction Divine Liturgy" both on May 21 and October 29 where the Divine Liturgy was explained at different intervals during the Divine Liturgy. During the summer I trained ten young boys from our Sunday and Armenian Schools to be acolytes and altar servers for our Church. Once a week also, I conducted rehearsals of our junior choir.

II. Guest Clergy

On November 28th, we were honored to have with us His Beatitude Archbishop Shnork Kaloustian, the Armenian Patriarch of Constantinople. In the evening, a Hrashapar Service was conducted in our Church welcoming His Beatitude. Prior to the church service, His Beatitude met with our Parish Council members and Diocesan delegates at an evening dinner. At night, His Beatitude spoke to our congregation about the life of the Armenian community in Turkey. On December 9, the Vicar of the Armenian Church of Paris, Bishop Kuid Nakashian visited our parish.

III. Sacraments and Services

The following sacraments and services were conducted in our church during the past year.

| | | | | | | | |
|----------|----|----------|----|----------|----|------------|---|
| Baptisms | 25 | Weddings | 11 | Funerals | 40 | Engagement | 1 |
|----------|----|----------|----|----------|----|------------|---|

IV. VISITATIONS

Pastoral visitations are essential for the mission of our Church. In a sense it is the Church that visits the homes of our parishioners. It also gives an opportunity to the pastor to know his parishioners better and to discuss with them both personal and church matters. During 1978, I have made 317 visitations. These include homes, hospitals, offices, nursing homes, funeral homes, cemeteries, and others. During the Christmas and Easter seasons, I have also blessed the homes of parishioners who had so requested.

V. Counseling Service

As the spiritual father of our congregation, I have made myself available for counseling our parishioners whenever there was a need for counseling and guidance. Twenty-nine counseling sessions were held with individuals and couples who intended to be married. I feel that marriage counseling for young couples is important in order that their future may be based on a sound foundation. I was conducting 19 counseling sessions with families who either had personal or family problems. Six other counseling sessions were held with other individuals and two with people who were being prepared for baptism in the Armenian Church.

The Pastor and his office are at your service to counsel our parishioners whenever the need may arise.

VI. Meetings

During the past year I have taken an active part, presided and conducted 211 meetings in our parish. These include meetings of the Parish Council, Diocesan delegates, the Senior Womens Guild, the Women's Auxiliary, Sunday School teachers, Armenian School, Trinity Mens Union, Trinity Young Couples Organization, ACYOA Seniors and Juniors, Chelsea Womens Auxiliary, Choir, joint meeting with executive committees of our church affiliated organizations, membership committee, lecture committee, Tribute Committee meeting, Bazaar Committee, New Year's Eve Celebration Committee, Nominating Committee, maintenance committee, meeting with the chairpersons of our church affiliated organizations, Friends of the Holy Trinity, with the youth of our community and individuals. These meetings are important for the vitality of our community where we deliberate on church matters and give guidance to our church affiliated organizations and our community in general.

On September 26th, I had invited a special meeting with some of the members of our community to consult with them and ask for their advice for the financial welfare of our church.

From May 2 through the 7th, I had participated in the Annual Clergymen's Conference and Diocesan Assembly in Detroit, Michigan. As a member of our Diocesan Council I had attended six times during the year to Diocesan Council meetings in New York City. Five times during the year I had also participated in the New England Clergymen's meetings to discuss mutual problems and coordinate our mission in New England.

VI. Educational

During the year I have visited our Sunday School and Armenian School. I have conducted assemblies and on some occasions been in the Sunday School classes to talk to our children about the teachings of our church and responded to their questions. I have planned curriculum for our Sunday School with the superintendent of our Sunday School. On several occasions I have been in the Armenian School classrooms to observe their growth in their culture and heritage. I have also conducted choir rehearsals with the Armenian School children. At the meetings of our church affiliated organizations, I have talked on various topics and answered questions.

We conducted our monthly lecture series, "Introducing the Armenian Church". Our guest speakers were: The Very Rev. Father Zaven Arzoumanian, Father Dajad Davidian, Dr. Krikor Maksoudian, and in May I gave the final lecture of this series, my subject being "the Ecumenical Movement and the Armenian Church". We have utilized our Church publication, "Dajar" to give information about the Armenian Church and her teachings and make it an interesting monthly paper. On different occasions, I have also given lectures to various organizations in the Greater Boston Area.

A. Publications - I am grateful to Barbara Tellalian who handles the public relations work for our community and writes press releases for the functions and programs of our church in both the Armenian and non-Armenian news media. I am glad that during the year on three different occasions, we were able to secure time on two TV networks. During the month of October, when we celebrate our cultural month, I had arranged eight short programs on Chanel 5 and invited different clergymen and educators from our community and New England to talk on different subject matters concerning the Armenian Church

and Armenian Culture. On December 20th in cooperation with St. James Church of Watertown, we were able to have a joint service on Chanel 4 where different ethnic groups celebrated Christmas. On January 7, 1979, we conducted Christmas Services and the Pastor was interviewed on Chanel 5.

During the month of October we were able to exhibit Armenian artifacts, manuscripts and paintings of Armenian artists.

B. Musical Programs and Pro-Musica. On Sunday, January 4, through the generosity of the children and grandchildren of Baghdasar and Baidzar Bozigians, we were able to invite Lily Chookasian of the Metropolitan Opera Company of New York to give a concert in our Church. The Church was filled to capacity. Miss Chookasian performed superbly. The Boston Globe gave beautiful coverage to this concert. We are grateful to the kind donors for their unique gift to our church.

On Sunday December 17, our Erevan Choral Society under the direction of the Very Rev. Father Oshagan Minassian, gave their Second Annual Choir Concert in our Church. We are grateful to Father Oshagan and his Chorous for a fine concert. The Pro-Musica committee of our Church had beautifully decorated the Sanctuary and hosted the reception following the concert.

I hope and pray that parishioners will sponsor similar concerts in our Church.

VII. Church Office

The pastor together with the pastor emeritus, Father Papken Maksoudian and the Church Secretary Rose Mamishian, take care of the office work. The Church office opens at 9:30 a.m. to 4:00 p.m. However, the pastor is available to take care of the needs of the Church at all times.

Deacon Peter Arakelian and other parishioners volunteer their time to help us in our office work. During the summer, Miss Agnes Nahigian helped us for the two weeks when the church secretary was on vacation. Both Father Papken and I publicly express our deep appreciation to Mrs. Rose Mamishian, our devoted Church secretary, for her dedication. We also wish to express our appreciation to Deacon Peter Arakelian and to our volunteers.

VIII. Gifts to our Church

During the past year we have received a large painting depicting the Resurrection of our Lord. This painting was a gift of Mr. & Mrs. Nishan Simonian to our Church. The painting will be anointed when the Primate visits our Church. We have also received monetary gifts both to the trust fund and to our Church by parishioners whose names may be found in the financial report of the Parish Council.

Our Church is grateful to Mr. & Mrs. Isaac Karchakian for their generous donation of the new bronze doors of our Church given in memory of their beloved son, Alan David Karchakian.

IX. Suggestions and Proposals

As your pastor, I want to inform you that during the past year I have interviewed two young men as prospective youth directors and director of Christian Education in our community. I have also spoken to His Eminence, the Primate, of

this essential need within our community. Unfortunately, as of today, we have been unable to secure a director for our youth and Sunday School. However, we shall pursue this matter until we find the likely person to serve our needs.

I recommend the following proposals for consideration:

- A. This Annual Parish Assembly should seriously reconsider the annual membership dues of our church. The Parish Council will make recommendations in this regard. I hope that you will make the right decision in this regard.
- B. On April 24, 1980, the Armenian people will commemorate the 65th Anniversary of the Genocide of 1915. I propose to build a memorial on our Church grounds dedicated to the memory of our martyrs. It is important that we form a three member committee to work on this project.

X. Appreciation

As your pastor, I would like to take this opportunity of publicly expressing my deep appreciation to the members of the Parish Council and its Chairman, Helene Dorian for her dedication and to the Diocesan Delegates, the Chairmen and members of each church-affiliated organization and to the members of the different committees within our community.

I would also like to express my appreciation to all those who serve in our Church on Sunday mornings during the Divine Liturgy.

Last but not least, my profound gratitude to the Pastor Emeritus and my brother in Christ, Father Papken Maksoudian, for his help in many ways, in my ministry to our Church, and likewise to Very Reverend Father Oshagan Minasian for his help and cooperation.

May God give us the strength and wisdom to work together for His Glory.

Reverend Father Mampre A. Kouzouian
Pastor

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Ստորեւ կը ներկայացնենք ծխական խորհուրդիս 1978 տարեշրջանի գործունէութեան տեղեկագիրը.-

1.- ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՍ ԿԱԶՄԸ.-

Տ. Մամբրէ Բինյ. Գուգուեան, նախագահ
Հելիյն Տորեան, Ատենապետուհի
Տքթ. Փօլ Պարսամ, Փոխ-Ատենապետ
Ժորժ Յակոբեան, Գանձապահ
Փիթըր Զէյթունճեան, Գանձապահի Օգնական
Անիթա Հետիսըն, Ատենաղպրուհի
Զարլս Նահապետեան, Փոխ-Ատենաղպիր
Պրուս Յարութիւնեան, Խորհրդական
Էն Հինդլեան, Խորհրդական
Ռէյմոնտ Պոզոյեան, Խորհրդական
Տքթ. Մայքըլ Խոլլիկեան Կրտսեր, Խորհրդական
Տանըլտ Թէլլալեան

Հետեւեալ անձերը երկու տարուան շրջանի համար ընտրուած էին ծխական խորհուրդի անդամ.-

Անիթա Հետիսըն, Տքթ. Փօլ Պարսամ, Տանըլտ Թէլլալեան, Զարլս Նահապետեան եւ Փիթըր Զէյթունճեան:

Տարուան ընթացքին անձնական պատճառներով կազմէս հրաժարեցան Ռէյմոնտ Պոզոյեան եւ Փիթըր Զէյթունճեան, որոնց շրջանը աւարտեցին ժէք Պչաքճեան եւ ծոզէֆ Յարութիւնեան:

2.- ԵԿԵՂԵՑԻՈՑՍ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆԵՐՆ

ԵՆ.-

Արժ. Տ. Մամբրէ Բինյ. Գուգուեան, Հոգեւոր Հովիւ
Արժ. Տ. Բաբգէն Ա. Բինյ. Մագսուտեան, Պատուակալ Հովիւ
Հոգշ. Տ. Օշական Վրդ. Մինասեան, Դպրապետ
Տիկ. Ռոզ Մէմիշեան, Քարտուղարուհի
Տիկ. Հէլըն Մուրատճեան, Երգեհոնահար
Լեւոն Թէրզեան, Սարկաւազ
Ժոզէֆ Աշճեան, Շէնքերու Խնամատար
Ժան Սիգուլլա, Շէնքերու մաքրութեան մասնակի ժամերով հոգատար
Գառնիկ Երանոսեան, Հոգատարի օգնական՝ մասնակի ժամերով

3.- ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ.-

Եկեղեցատէր Երէց Տիկնանց Միութիւն
Եկեղեցատէր Տիկնանց Միութիւն
Զըլսիի Եկեղեցատէր Տիկնանց Միութիւն

Լին-Սէյլըմ-Փիպատիի Եկեղեցասէր Տիկնանց Միուլթիւն
 Արանց Միուլթիւն
 Դպրաց Դաս
 Կիրակնօրեայ Դպրոց
 Հայ Դպրոց
 Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Երէց եւ Կրտսեր Կազմակերպու-
 թիւններ
 Ամուսնացեալ Երիտասարդ Ջոյգերու Միուլթիւն
 Երեւան Երգչախումբ

4.- ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐ.-

Արթնր Ա. Աբգարեան
 ծան Ս. Տէվէճեան
 Արշի Գ. Խոլլիկեան
 ծան Սուրսուրեան
 Փիթրը Թալանեան
 Տիրան Ծաղիկեան

Արթնր Աբգարեան Տիթրոյթ փոխադրուած ըլլալով, իր մնացեալ
 շրջանը կը լրացնէ Ռիչըրտ Կիւլիսսեան:

5.- ՀԻՒՐԱՄԵԾԱՐՈՒԹԻՒՆ.-

Եկեղեցական արարողութեանց աւարտին ծխականներու մէկտեղումը
 հիւրամեծարութեան ժամուն, հետզհետէ աւելի ժողովրդականութիւն կը
 գտնէ: Այդ պահը առիթ կու տայ ծխականներու իրարու հետ ընկերային
 ժամանց ունենալու: Իւրաքանչիւր կազմակերպութիւն տարին ամիս մը
 կը ստանձնէ հիւրամեծարութիւնը:

6.- ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ:-

Տասնըհինգ օրը անգամ մը ծխական Խորհուրդի ժողով տեղի կ'ու-
 նենայ կանոնաւոր կերպով: Ժողովներ ունեցած ենք եկեղեցապատկան
 կազմակերպութեանց ատենապետներուն հետ, ինչպէս նաեւ եկեղեցւոյս
 նախկին ծխական Խորհուրդներու անդամներուն եւ երեսփոխաններուն
 հետ: Ծխական Խորհուրդս ժողով գումարած է նաեւ Ուոթըթաունի Ս.
 Յակոբ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին հետ, մեր երկու եկեղեցիները
 հետաքրքրող նիւթերու շուրջ:

7.- ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.-

Թեմիս 76-րդ Թեմական Պատգամաւորական ժողովը գումարուեցաւ
 Մայիս 4, 5, 6 եւ 7 թուականներուն Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ
 Եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյս կողմէ մասնակցեցան Հոգեւոր Հովիւր,
 Թեմական Պատգամաւորները եւ ծխական Խորհուրդի ատենապետը:

8.- ՅԱՐԳԱՆՔԻ ԺԱՇԿԵՐՈՅԹ.-

Տարւոյս Փետրուար 4-ին ճաշկերոյթով մը պատուեցինք Վալէմի Տըլֆինգի աստղերէն, ֆոլթպոլիստ Կարօ Եփրեմեանը: Սոյն գործի ատենապետութիւնը ստանձնած էր Տիկ. Նէնսի Կարապետեան, որ լաւագոյն կերպով կատարեց իր յղացած եւ գլխաւորած գործը: Մեր գնահատանքը կը յայտնենք Նէնսի Կարապետեանին եւ իր յանձնախումբի անդամներուն, ինչպէս նաեւ Տըթ. Մայքըլ Խոլլիկեանին՝ որ ատենապետն էր զրքոյկի յանձնախումբին:

9.- ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ.-

Եկեղեցւոյ Տարեկան Դաշտահանդէսը տեղի ունեցաւ 25 Մայիսի նորակառոյց Ս. Վարդանանց Եկեղեցւոյ հողին վրայ: Դաշտահանդէսին ատենապետն էր Պրուս Յարութիւնեան, համագործակցութեամբ էն Հինդլեանի եւ իրենց յանձնախումբին: Դաշտահանդէսի զուտ շահն էր 5800 տոլար:

10.- ՊՐՈՆՁԷ ՆՈՐ ԴՈՆԵՐ.-

Եկեղեցւոյս գլխաւոր մուտքի պրոնզէ նոր դռներու ընծայումը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 1-ին: Սոյն դռները նուիրած էին Տէր եւ Տիկ. Այգազ Քարչաքեաններ, ի յիշատակ իրենց վաղամեռիկ զակին՝ Ալէն Տէյվիսի: Այս առթիւ մեր անվերապահ գնահատանքը կը յայտնենք Տէր եւ Տիկ. Քարչաքեաններու, իրենց փառաւոր նուէրին համար: Ժան Սուրսուրեանի գլխաւորած յանձնախումբը գլուխ հանեց այս զեղեցիկ գործը:

